

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Posted on February 26, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



աշխարհական տարրի իրաւասութիւնները եւ ազգին հանդէպ իրենց ունեցած պարտաւորութիւնները, ինչպէս նաեւ փոխադարձաբար իւրաքանչիւր անհատի պարտք ու իրաւունքը ազգային իշխանութեան հանդէպ:

Սահմանադրութիւնը յառաջ եկաւ մեր ազգային կեանքի մէջ տեղի ունեցող օրինազանցութիւններն ու անկանոնութիւնները սանձելու, որովհետեւ մինչեւ 1860 թուական, Ազգային Սահմանադրութեան հաստատումը, մեր ազգային կեանքը կը ղեկավարուէր պատրիարքներու եւ ունեւորներու (ամիրաներու) դասակարգի մը կողմէ, որոնք կը գործէին իրենց անձնական շահերէն եւ փառասիրութենէն մղուած: Ահաւասիկ այս ունեւորներու դասակարգը այնքան զօրացաւ որ պատրիարքներն անգամ ենթակայ եղան իրենց քմահաճոյքներուն:

Բարեբախտաբար Եւրոպայի մէջ իրենց ուսումը կատարելագործած երիտասարդ մտաւորականներու սերունդ մը, տոգորուած Ֆրանսական յեղափոխութեան սկզբունքներով եւ ընկերային ըմբռնումներով, անհանդուրժելի նկատելով մեր ազգային կեանքին մէջ տիրող մտայնութիւնն ու վարչակարգը, ժողովրդային հակակշռին ենթարկեց պատրիարքներու եւ ունեւորներու դասակարգին անսանձ եւ անփառունակ գործունեութիւնը:

Այս դժբախտ կացութեան բնական հետեւանքն է այն տիտուր պատկերը զոր մեզի կը ներկայացնէ պատրիարքներու պաշտօնավարութեան ցուցակը, ուր յստակօրէն կը տեսնենք թէ ինչպէս Պոլսոյ 109 պատրիարքներէն 8-ը նոյն տարին հրաժարած են: 38-ը միայն մէկ տարի պաշտօնավարած են: 14-ը երկու տարի պաշտօնավարած են: 11-ը երեք տարի պաշտօնավարած են. մէկ խօսքով՝ 109 պատրիարքներու պաշտօնի տեւողութեան միջինը եղած է չորս տարի եւ երեք ամիս միայն...: Ի՛նչ ողբերգութիւն:

Թէեւ երիտասարդութեան այս համարձակ քայլը ժողովրդային զանգուածներէն լայն քաջալերանք ստացաւ, սակայն բախեցաւ ունեւորներու դասակարգին ընդդիմութեան եւ տեղի տուաւ բուռն պայքարներու, որոնք ժամանակի ընթացքին աստիճանաբար զարգացան եւ յանգեցան սահմանադրական կարգերու հաստատումին, որովհետեւ ե՞րբ կարելի եղած է խեղդել ժողովրդային շարժում մը բիրտ միջոցառումներով: Երկար պայքարներէ ետք ժողովուրդը կրցաւ արժեցնել իր իրաւունքը, վերջ տալով հարիւրաւոր տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող վարչակարգի մը, կոտրելով յամառութիւնն ու յաւակնութիւնը ունեւորներու դասակարգին, որ կռթնած իր նիւթական առաւելութեանց՝ կը կեղեքեր Հայ Ազգը:

Թէեւ շատոնց անցած են այն օրերը, բայց մեր այսօրուան ազգային-եկեղեցական կեանքը իր բազմաթիւ պարագաներով կը յիշեցնէ ամիրայական այս դասակարգի սխրագործութիւնները: Տակաւին կան մարդիկ, «ազգայինք» յորջորջումով, որոնք կը յանդգնին իրենց ոսկիներու ոյժով ազգային ղեկին տիրանալ, հարիւր յիսուն տարիներ առաջ մեծ զոհողութիւններու գնով զգեստնուած դրութիւն մը վերահաստատելու:

ցնորական ձգտումով, այն ալ՝ քսանմեկերորդ դարու մեջ:

Այդպիսիներուն՝ մեր խօսքը հետեւեալն է.- այդ օրերը շատո՛նց անցած են ու այլեւս չեն կրնար վերադառնալ, որքան որ ալ նեցուկ կանգնին ձեզի այլեւայլ պատեհապաշտ կազմակերպութիւններ իրենց զանազան հաշիւներով եւ ծրագիրներով: Որովհետեւ, ուշ կամ կանուխ, կու գայ օրը, երբ ժողովուրդի անտարբեր զանգուածը ի վերջոյ կ'արթննայ իր թմբիրէն, եւ իւրաքանչիւր անհատ գիտակցելով ազգին հանդէպ իր պարտաւորութիւններուն, կը կատարէ իր նիւթական օժանդակութիւնը իր կարողութեան չափով, կը ներդնէ իր բարոյական եւ ֆիզիքական զոհողութիւնը, կանգուն պահելու համար ինչ որ իրեն փոխանցուած է որպէս աւանդ իր պապերէն՝ եկեղեցի, դպրոց եւ բարեսիրական հաստատութիւններ անխտիր: Հետեւաբար՝ բոլոր անոնք, որոնք կը փորձեն ամիրայութիւն խաղալ, «դրամը մեր ձեռքն է, ազգը մենք պիտի ղեկավարենք» յայտարարող յաւակնոտները, պարտին հնազանդիլ օրէնքի ու կանոնի ամէն մէկ տրամադրութեան եւ միայն իրենց անձերու արժանիքներուն ապակիներով յաջողին վստահութիւն ներշնչել ժողովուրդին, որ միակ տերն է ազգային հաստատութիւններուն:

Նոյն պարտաւորութիւնները ունին նաեւ մեր նուիրապետական Աթոռներու վրայ բազմող հովուապետերը, որոնք թեւէ ի պաշտօնէ կը նախագահեն մեր ազգային ժողովներուն, բայց եւ այնպէս պարտաւոր են գործել Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն եւ ոչ ըստ կամա: Չկայ ոեւէ անհատ հեղինակութիւն, որ ինքզինք աւելի բարձր կը նկատէ կամ կրնայ նկատել քան օրէնքը. «Ո՞վ կրնայ հաւատալ, որ Աստուած մէկ անձի միայն պիտի ուզէ տալ արդար դատելու այդ իրաւունք-իշխանութիւնը»: Եւ սակայն հակառակ այս մեծ ճշմարտութեան, մեր նուիրապետական Աթոռներու վրայ բազմած հովուապետերը կը յանդգնին անտեսել եւ ոտնակոխել օրէնքի տարրական պարտաւորութիւնները: Այս բոլոր անկանոնութեանց որպէս հետեւանք կը հանդիպինք անարդար եւ անբնական կարգազրկումներու, որոնք միայն կը նսեմացնեն փայլքը հազարամեայ Հայ Եկեղեցւոյ եւ զայն կը վերածեն շուկայական առեւտրական հաշիւներու:

Եկեղեցին անկասկած՝ ունենալով օրէնսդրական իրաւունք, ունի նաեւ օրէնքները գործադրելու իրաւունք՝ յանցաւորներու եւ զանցառուներու նկատմամբ: Բայց իւրանքանչիւր յանցանք պէտք է քննուի, պարզուի, ապացուցուի ու ապա ենթարկուի դատապարտութեան: Սակայն այդպէս չեն պարագաները այսօր, որովհետեւ մեր նուիրապետական Աթոռներէն ներս դեմ յանդիման կու գանք կամապաշտութեան եւ քինախնդրութեան, որոնք մեզ կը յուզեն եւ շփոթի մատնելէ ետք պոռթկում կը յառաջացնեն իր Եկեղեցիով լրջօրէն մտահոգ իւրանքանչիւր հայու մօտ: Այս պարագային, լուռ մնալը ո՛չ թէ անտարբերութիւն է, այլ մեղսակցութիւն, որովհետեւ իւրանքանչիւր հայ, որպէս մէկ մասնիկը Հայց. Եկեղեցիին, եւ նամանաւանդ իւրաքանչիւր եկեղեցական, բաժրաստիճան թէ փոքրաւոր՝ կրկնակի բարոյական

Կաթողիկոսներու եւ պատրիարքներու պարագան, պաշտօններ՝ զորս կը վարէին ցկեանս:

Այսօր սակայն, ինչպէս որ քաղաքական եւ տնտեսական կենցաղի մեր պայմանները փոփոխուած են ժամանակի պահանջներուն համաձայն, նոյնպէս պարտաւոր ենք փոփոխութիւններ կատարել Հայց. Եկեղեցւոյ վարչական դրութեան մէջ: Բարեբախտաբար՝ ժամանակը լուծած է շատ մը հնադարեան սովորութիւններ, մասնաւորաբար ժառանգական իրաւունքը՝ ըլլայ ան քահանայութեան եւ կամ կաթողիկոսութեան պաշտօններու պարագային:

Աշխարհը կառավարող սահմանադրական ընդհանուր եւ մարդկային հիմնական սկզբունքներու, ինչպէս նաեւ պատմական փաստերու վրայ հիմնուելով կրնանք յայտարարել՝ որ Հայց. Եկեղեցւոյ կառավարման բարձրագոյն պաշտօնը՝ որ կաթողիկոսութիւնն է, պատշաճ է որ ենթարկուի նաեւ կանոնական պարտաւորութեանց եւ պաշտօնավարութեան տրամաբանական սահմաններու: Այլ խօսքով՝ նկատի առնել ենթակային տարիքի հարցը եւ պաշտօնեութեան տեւողութեան սահմանը եւ ըստ այնմ ճշտել ընտրելի թեկնածուները:

Տարիքի հարցը անհրաժեշտ է, որովհետեւ մարդ արարածը իր կամքէն անկախ ֆիզիքական չափ ու սահման մը ունի իր տոկոսութեան մէջ, իր պաշտօնը արդիւնաւորապէս կատարելու համար: Անհրաժեշտ չենք գտներ աւելի պարզաբանել տարիքի հարցը, որովհետեւ բարձրագոյն պատասխանատուութիւններով ծանրաբեռնուած անձը, թեւակոխելով որոշ տարիքի մը սահմանը, պիտի չկարենայ շարունակել իր պաշտօնը նոյն աշխուժութեամբ եւ ոգեւորութեամբ եւ հետեւաբար անհրաժեշտ է որ քաջուի եւ հանգստանայ, Եկեղեցիին խնայելով նորանոր բարդութիւններ:

Իսկ եթէ տակաւին առոյգ եւ կորովի է հանգստեան կոչուող ենթական, կրնայ իր հանգստեան ժամանակ իր տարիներու փորձառութեամբ ձեռք բերած գիտելիքները ի սպաս դնել նոր քատրերու դաստիարակութեան եւ պատրաստութեան, ինչպէս նաեւ կրօնական եւ բանասիրական աշխատանքներու արդարօրէն գնահատելի աշխատանքին մէջ: Միւս կողմէ, Ազգային Սահմանադրութեան երկրորդ եւ երրորդ յօդուածները կը թելադրեն եւ կը պարտաւորեն Ազգային իշխանութիւնը որ «Ազգին ծառայութեան մշտնջենապէս նուիրեալներուն կացութիւնը բարւոքեն եւ անոնց ապագան անդորրեն»:

Այս սկզբունքին հաւատացող մեծագոյն օրինակը տուաւ վերջերս Կաթողիկէ Եկեղեցւոյ իմաստուն Հովուապետը՝ Պենետիկոսոս ԺԶ. Պապը, որ քաջութիւնն ու վեհանձնութիւնը ունեցաւ յայտարարելու, որ իր յառաջացեալ տարիքի բերմամբ ֆիզիքապէս տկարացած ըլլալով կը հրաժարի իր հովուապետութենէն, Աթոռը յանձնելով երիտասարդ նոր ոյժերու:

Կը կարծենք որ մեծ իմաստութիւն կայ նման մտածողութեան մէջ, երբ նկատի առնենք այն իրողութիւնը որ մարդիկ կրնան կա՛մ ֆիզիքապէս տկարացած ըլլալ, կամ գոհացուցիչ չէ իրենց կատարած պաշտօնը, եւ կամ ալ կան այնպիսի չնախատեսուած պատճառներ, որոնք արգելք կը հանդիսանան առողջ եւ ողջամիտ պաշտօնավարութեան մը: Հետեւաբար այդ պաշտօնեաներու դադրեցումը կը խնայէ թե՛ անհատին հոգեմաշտում, եւ թէ հայ ժողովրդեան կեանքի նոր ակնկոծումներ:

Այս է ընդունուած օրինական կերպը: Հակառակ պարագային կը ստեղծուի քառս եւ անկարելի կը դառնայ շինարար որեւէ աշխատանք: Կեանքի եւ տրամաբանութեան երկաթեայ պահանջն է այս, որուն պարտաւոր է ենթարկուիլ ամէն անձ: Գործնական կեանքէն եկող այս ազդարարութիւնը բաւական պիտի ըլլա՞յ՞ զգաստացնելու մեր ղեկավարները որոնք պարտաւոր են բժախնդրութեամբ, շրջահայեցութեամբ եւ նուիրումով առաջնորդելու հայ ժողովուրդը:

Ազգովին կ'ապրինք ողբերգական վիճակի մէջ. Կեանքի պայմանները եւ հանրային հետաքրքրութեան լրջութիւնն ու պակասը մեզ կանգնեցուցած են քայքայիչ վտանգներու առաջ, որոնց առ հասարակ գիտակցութիւնն անգամ չունինք: Դժբախտաբար եկեղեցւոյ խունկը եւ եկեղեցական պաշտօնեութեան բեմական հրապոյրը ակելի հիմնական տեղ կը գրաւեն մեր հոգիին մէջ քան Հայց. Եկեղեցւոյ ժողովրդապետական կառոյցը նուիրագործող եւ ամրացնող պատուանդանը, որ կը կոչուի Սահմանադրական Օրէնք: Մէկդի դրած ենք ամէն տեսակի առողջ դատում եւ իրաւական արժէք ներկայացնող ամէն խարիսխ, որ իր մէջ կը մարմնաւորէ ազնիւ սկզբունքներ:

Հայց. Եկեղեցին պատմական իր կոչումի ճամբէն շեղած է ներքին եւ արտաքին բազմաթիւ ազդակներու, պատճառներու եւ դասալքութեան հետեւանքով եւ կանգնած է այսօր գահավիժումի եզրին: Դաւաճանել ազգային գոյութեան ամուր հիմերը կազմող սահմանադրական օրինականութեան՝ կը նշանակէ հող պատրաստել ազգային գիտակցութեան չքացումին, դասալքութեան եւ ընդհանուր ազգային նկարագրի կազմալուծումին: հանրային գիտակցութեան զարթօնքը միայն կրնայ մեզ փրկել եւ առաջնորդել նոր արշալոյսերու:

Ազգային ժողովները, որոնք արտայայտիչը պետք էր ըլլային մեր ժողովուրդի կամքին, հեղինակութեան եւ իրաւունքներուն, եղած են լոկ անփութութեան եւ ձեռնափութեան վիճակ ստեղծող ժողովներ: Հայց. Եկեղեցին հետզհետէ դառնալու վրայ է կղերատիրական հաստատութիւն մը, անտեսելով ամէն ժողովրդապետական օրէնք, կարգ ու կանոն: Այս սանձարձակ վիճակին մէջ տակաւին կան ոմանք, թէկուզ փոքրաթիւ, որոնք կը հաւատան սահմանադրական սկզբունքներու, բայց եւ այնպէս չունին բարոյական ոյժը իրենց ձայները բարձրացնելու, եւ այդպէս ալ կղզիացած մեկուսի կ'ապրին:

Սահմանադրական կարգերու հաստատումէն հարիւր յիսուն տարիներ ետք, կ'ունենանք այն տպաւորութիւնը որ փոխանակ քայլ մը առաջ երթալու՝ կ'երթանք դէպի ետ՝ այն խուժանային եւ անբոխային տարիները, երբ ամէն ինչ կ'որոշուէր ամիրաներու կողմէ: Վստահաբար շատեր կը տեսնեն այս իրողութիւնը, բայց վախը ունին սահմուկեցուցիչ այս վտանգը ճակատէն դիմագրաւելու եւ հակադարձ շարժումի մը դիմելու, թէեւ այս օրերուն հայկական մամուլի մէջ կը կարդանք թէ ինչպէս կարգաթող, կարգալոյծ եկեղեցականներ քաջութիւնը կ'ունենան բարձրադասակ յայտարարելու իրենց դժգոհութիւնը:

Ժամանակն է որ կազմակերպութիւններ, հանրային ղեկավարութիւն, գիտակից հոգեւորականութիւն եւ պատասխանատու աշխարհական մտաւորականութիւն կոչումն ու պատասխանատուութիւնը զգան պայքարի գնով պաշտպանելու այն ինչ որ մինչեւ հիմա շահուած է ժողովրդային բուռն պայքարով: Անհրաժեշտ է կարեւորութիւն ներկայացնող խնդիրներու առթիւ ըլլալ նախանձախնդիր եւ աղմուկ ստեղծել, գրչապայքարի դիմել, փոխանակ անտարբերութեամբ դիտելու օրէնքի եւ կանոնագրութեանց խախտումները, նամանաւանդ երբ սանձարձակ քայլեր կ'առնուին ազգային-եկեղեցական մարզերու մէջ:

Ցաւ ի սիրտ կը յայտարարենք թէ բացորոշ վարանք մը կայ կարգ մը պատասխանատու մարդոց մօտ՝ ազգային-եկեղեցական սահմանադրական կարգերը անխախտ պահելու եւ մասնաւորաբար սանձելու բարաստիճան եկեղեցականներու ակներեւ յաւակնութիւններն ու յոխորտանքները, եւ պարտադրել որ մասն անոնք իրենց կոչումին թելադրած պարկեշտութեան մէջ: Ձեռնածալ մնալ բացայայտ ապօրինութիւններու, սահմանազանցումներու եւ աններելի յաւակնութեանց հանդէպ՝ մեզ կը դարձնեն համահաւասար մեղսակիցներ բոլոր անոնց հետ, որոնք կը չարաշահեն հանրային վստահութիւնը:

Կենսականը այն է՝ որ անխախտ եւ անխոտոր պէտք է պահպանուին ժողովրդապետական կարգերը Հայց. Եկեղեցւոյ եւ ազգային-եկեղեցական կեանքին մէջ: Հայց. Եկեղեցւոյ գերիշխան հեղինակութիւնը, որ օրուան կաթողիկոսն է, պարտաւոր է յարգել սահմանադրական կարգերը, որովհետեւ ժողովրդավարական կարգերու անտեսումը արհամարհանք մըն է հայ ժողովուրդի նուիրական եւ անկապտելի իրաւունքներուն հանդէպ:

Երբ ժողովուրդի մը կեանքին մէջ կը պակսի օրէնքի տիրապետութիւնը, երբ հանրային կարծիք եւ ղեկավարներ ուս թօթուելով կ'անցնին, սահմանազանցումները կը շարունակուին աւելի շեշտակի կերպով եւ կը դառնանք անդեկավար խուժան հասարակութիւն մը: Այսօր՝ բոլոր ժամանակներէ աւելի, մեր ժողովուրդի առօրեայ կեանքէն բխող հրատապ հարցերը բազմաթիւ են եւ կը սպասեն արդար լուծումի:

Իրատես եւ իրապաշտ իւրաքանչիւր հայ, որ հանրային ճանաչում եւ ապրում ունի, չի

կրնար անտարբեր մնալ ի տես մեր եկեղեցական-ազգային կեանքին մէջ տեղի ունեցող կաղաքումներուն, թերացումներուն եւ սխալներուն: Ճակատագրական այս, օրերուն երբ մեզ կը շրջապատէ ողբերգական առօրեան, չենք կրնար եւ իրաւունք ալ չունինք կրաւորական դիրքի մէջ մնալու, երբ մեր աչքին առջեւ կ'ոտնակոխուին սահմանադրական ամեն տեսակի օրէնքներ՝ անհատական կեցուածքներ արդարացնելու համար, որոնք զուրկ են տրամաբանական ըլլալէ ամեն կերպով:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցույ մէջ հոգեւոր իշխանութիւնը եկեղեցականութիւնն է եւ սակայն վարչական-ժողովական կեանքի մէջ՝ կաթողիկոսներ, պատրիարքներ եւ առաջնորդներ գործադիր իշխանութիւնը կը ներկայացնեն եւ որեւէ օրէնսդրական յաւակնութիւն չեն կրնար ունենալ, որովհետեւ օրէնքէ վեր ոչ մէկ իշխանութիւն գոյութիւն ունի եւ, դարձեալ, որեւէ հանգամանք պետք չէ գիրենք մղէ ինքնիշխան դառնալու յանձնապաստանութեան:

Նուիրապետական Աթոռներու գահակալներ, առաջնորդներ, կուսակրօն թէ ամուսնացեալ քահանայութիւն՝ հաշուետու են ազգին եւ անկէ ընտրուած ժողովներու: Որեւէ շեղում եւ օրինազանցութիւններ անընդունելի են՝ ինչ ձեւի արդարացումներ ալ յառաջ քշուին զանոնք չքմեղացնելու համար:

Ներելի չէ այս կրաւորականութիւնը հայուն, որ աւելի քան հարիւր յիսուն տարիներ առաջ թօթափեց ամբոխային հոգեբանութիւնը եւ իր քայլերը յարմարցուց արեւմտեան աշխարհի ընկերային կարգերուն եւ սկզբունքներուն: Անհրաժեշտ է արթուն պահել հանրային կարծիքը, բողոքել եւ խափանել ամեն չարաշահում, անկարգութիւն, սայթաքում եւ ապաստում որ կ'արատաւորէ հայութեան պատիւն ու կ'եղծանէ անոր նկարագիրը մեր եկեղեցական-ազգային կեանքին մէջ:

Չենք կրնար անտարբեր մնալ այն իրողութեան հանդէպ, որ մեր նուիրապետական Աթոռները հոգեւոր եւ նուիրապետական իրենց դերերուն մէջ ձախողած են այն պատճառով որ արտաքին ու ներքին քաղաքական միջամտութիւններ եւ հետամտութիւններ թոյլ չեն տար որ եկեղեցին առողջ գործունէութիւն ունենայ եկեղեցական-ազգային կեանքին մէջ, ինչ որ իր առաքելութեան կորիզը կը կազմէ: Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին պետք է գերծ մնայ քաղաքական որեւէ գունաւորումէ, հակառակ պարագային ան կը դառնայ հաւաքական խաթարումի եւ այլասերումի թատերաբեմ:

Ամեն բանէ աւելի մեր մտահոգութեան կորիզը կը կազմէ մեր նոր սերունդը, որուն պիտի փոխանցենք հայապահպանման գործի անմար ջահը: Սերունդ մը, որ շատ աւելի շեշտուած կերպով ենթարկուեցաւ արեւմտեան աշխարհի կեանքի բոլոր պայմաններուն՝ լեզու, կրթութիւն եւ նպաստաւոր ապրուստի լայն հնարաւորութիւններ: Այս նոր սերունդը դժբախտաբար յաճախ աւելի ամերիկացի է, ֆրանսացի է, գանատացի է, եւայլն, քան հայ: Ինչպէ՞ս ակնակալել լուրջ կեցուածք այնպիսի սերունդէ

